ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

N 9731 ***03 դեկտեմբեր 2024թ.***

«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ՝ ՍԱՐՈ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան,

Հայտնում եմ, որ Մասիս համայնքապետարանի և «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊ ընկերության միջև 07.06.2024թ. կնքված N ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/47-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը պարտավորվել է ֆինանսական միջոցների առկայության և դրանց հիման վրա կողմերի միջև համաձայնագրի կնքման միջոցով մատակարարելու Պայմանագրով նախատեսված ապրանքները՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում: Համաձայնագիրը երկկողմանի կարգով հաստատվել է 29.07.2024թ., սակայն մինչ օրս մատակարարվել է միայն Պայմանագրի 8-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը (հիմք՝ 27.08.2024թ. B 0249248158 հաշիվ վավերագիր), իսկ 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով մատակարարումները չեն կատարվել:

Ընդ որում, Պատվիրատուն 28.10.2024թ. N 8888 գրությամբ «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊ ընկերությանը տրամադրել է ողջամիտ ժամկետ՝ Պայմանագրի 1-ին և 7-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները մատակարարելու նպատակով, սակայն մինչ օրս մատակարարումները չեն կատարվել, ուստի Պայմանագիրը կհամարվի միակողմանի մասնակի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Միաժամանակ առաջարկում եմ սույն ծանուցումը ստանալու օրվանից հաշված 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում Ձեր ընկերության կողմից որպես պայմանագրային

պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման ապահովումը՝ 270 000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովումը՝ 180 000 /հարյուր ութանասուն հազար/ ՀՀ դրամի չափով, ինչպես նաև պայմանագրի 6-րդ կետով նախատեսված տույժերը և տուգանքը վճարել Պատվիրատուի 900 435 002 101 հաշվեհամարին, այլապես դրանց գանձումը կիրականացվի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սահմանված ժամկետում պայմանագրի որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները Ձեր կողմից վճարված լինելու դեպքում Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վճարումները պետք է կատարել վերոնշյալ հաշվեհամարին, իսկ վճարումը հավաստող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժին, 3-րդ հարկ, 316 սենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

Կատ. Գնումների բաժնի
պետ՝ Ք. Խաչատրյան